



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

04/10/2022

**ՈՐՈՇՈՒՄ N 126-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՅՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏԵՎՈՂ  
ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մասը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի հունիսի 1 թիվ 1053-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի թիվ 51-Ն որոշումներով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող, Որոտան գյուղում գտնվող 0,12767հա հողատարածքի (կադաստրային ծածկագիր՝ 09-077-0002-0017-ից) վրա առկա 44,1քմ ընդհանուր մակերեսով շինությունը (այգետնակ) և 0,7քմ պարիսպը, որը ներառված չէ Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի թիվ 51-Ն որոշմամբ հաստատված համայնքային գույքի ցանկում և նշված գույքի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ՝ ճանաչել Գորիս համայնքի սեփականություն:
2. Սույն որոշման 1-ին կետով համայնքային սեփականություն ճանաչված գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո, այն ներառել համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի ցանկում
3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառնությունների իրականացումը:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԱՌՈՒԸԱՆՅԱՆ ԱՌՈՒԸ

